Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

«Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու վերականգնում և զարգացում

Նախնական տեխնիկական գնահատում

Բովանդակություն

1. Ներածական 3
2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը 5
3. Վարչական տեղեկություններ 7
5. Առկա տեղեկություններ 8
6. ՆՏԳ-ի շրջանակը 9
7. ՆՏԳ 10
8. Փաստաթղթավորում 18
9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ 29

1. Ներածական

1.1 Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի

Նկ.1. Տեղադիրքը (սև եզրագիծ) Ղարսի պողոտայի հարող տարածք

Նկ.2. Սև բերդ (ընդհանուր տեսարան)

1.2 «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց

1.3 Կարո Այվազյան

1.4 Էլ-փոստ՝ k.ayvazyan@yandex.ru

1.5 Համաքաղաքային նշանակության ռեկրեացիոն գոտի

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Մայր Հայաստան-Սև բերդ» հարող տարածք, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց:

Կանաչապատ տարածքում տեղադրված են պետական ցուցակում ընդգրկված պատմամշակութային հուշարձաններ՝ պատմաճարտարապետական (թվով 1), մոնումենտալ արվեստի (թվով 1) և ինչպես նաև նորակառույց շենքեր շինություններ (թվով մոտ 10):

1.6 Հուշարձանների գույքագրման համարը՝

ա. «Սև բերդ» ամրոցը - պետ. ցուցիչ՝ 7.1.2, հանրապետական նշանակության,

բ. «Մայր Հայաստան» հուշարձանը - պետ. ցուցիչ՝ 7.1.20, հանրապետական նշանակության:

1.7 Վայրի տեսակը

Ըստ հողային օրենսգրքի հանգստի համար նախատեսված, պատմական և մշակութային «Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու տարածքը դասվում է հատուկ պահպանվող հողերին:

1.8 Կարևոր ամսաթվեր

ա. «Սև բերդ» ամրոցը կառուցվել է XIX դարում /1834 թ/,

բ. «Մայր Հայաստան» հուշարձանը կառուցվել է 1975 թվականին

գ. Ռեկրեացիոն գոտին սկսել է ձևավորվել 1960-ական թվականներին:

դ. Ամրոց «Ալեքսանդրոպոլ» («Մեծ») կառուցվել է 1835-1845 թվականներին

1.9 Ընթացիկ կիրառում(ներ)ը

ա. «Սև բերդ» ամրոցը XIX դարից մինչև XX դարի սկիզբը օգտագործվել է որպես ռազմական նշանակության օբյեկտ, 2016 թ. վերակառուցվել է որպես մշակութային օբյեկտ:

բ. «Մայր Հայաստան» հուշարձանը 1975 թվականից իր սկզբնական նշանակությամբ մինչ օրս օգտագործվում է որպես մոնումենտալ արվեստի հուշարձան:

գ. Ռեկրեացիոն գոտու տարածքը այժմ օգտագործվում է որպես

- կանաչապատ տարածքները՝ հանգստի,
- ցածրահարկ կառուցապատում՝ հասարակական,
- ջրային մակերես,
- Էներգետիկ՝ բարձր լարման գծեր /110 կվ/,
- պատմամշակութային հուշարձանները՝ մշակութային միջոցառումներ, նշանավոր
- իրադարձությունների միջոցառում, գիտական ուսումնասիրման, քարոզչական,
- անօգտագործելի տարածքներ:

2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը

Քննարկվող «Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտին գտնվում է Գյումրի քաղաքի հարավ-արևմտյան հատվածում, Ղարսի պողոտայի հարող տարածքում «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցի սահմաններում: Տարածքը բլրապատ է, ծովի մակարդակից 1530-1540 մետր է: Վերին շերտում ձևավորվել են սևահողեր:

Տարածքում կան երեք կանգուն բերդեր: Գյումրու **«Սև»** /Փոքր/, **«Կարմիր»** /հյուսիսային/ և «Աեքսանդրոպոլ» /«Մեծ»/ բերդերը:

«Սև» բերդը եղել է պաշտպանական կառույց և ծառայել է որպես զինվորական բանտ: Գյումրեցիները «Սև» բերդին անվանում են **«**Սև Ղուլ**»:**

Ռեկրեացիոն գոտու միջնամասում բլրի վրա 1975 թվականին քանդակագործներ Ա. Սարգսյանի, Ե. Վարդանյանի և ճարտարապետ Ռ. Եղոյանի նախագծով կառուցվել է «Մայր Հայաստան» հուշահամալիրը:

Այդ հուշարձանները Գյումրի քաղաքի համար նշանակալից են՝ բերդը որպես քաղաքի հիմնադրման, արձանը որպես բացառիկ արվեստի նմուշ և հայ ժողովրդի հաղթանակների խորհրդանիշ: Բլուրների վրա գտնվող բերդը իր ծավալով, իսկ արձանը իր բարձրությամբ տարածքում հանդիսանում են որպես քաղաքաշինական դոմինանտներ:

Ղարսի պողոտայի կողմից կառուցապատված է ցածրահարկ /1-2 հարկանի/ հիմնական և ժամանակավոր հասարակական և բնակելի շենքեր շինություններով, որը զբաղեցնում է այգու 0.6 հեկտար տարածք: Այժմ արհեստական լճի մոտ կառուցվում է հասարակական սննդի օբյեկտ: Նույն պողոտայի երկարությամբ «Մայր Հայաստան» հուշարձանի մոտեցման մասում գոյություն ունի ավտոհանգրվան:

«Սև բերդ» ամրոցի վերակառուցման աշխատանքների արդյունքում ամրոցում կազմակերպել է խոշոր մշակութային կենտրոն: Ծածկելով ամրոցի ներքին տարածքը մետաղական ֆերմաներով և իրականացնելով մասնակի հատակագծային փոփոխություններ՝ միջնամասում կազմակերպվել է դահլիճ, պարագծով երկրորդ հարկում հյուրասենյակներ, հասարակական սննդի հատված և կենտրոնի գործունեությունն ապահովելու համար այլ սպասարկման ենթակառուցվածքներ, իսկ տանիքի հարթ մասում բացօթյա սրճարան, որտեղից երևում է քաղաքային և կենսապատկերի համայնապատկերը:

«Սև բերդը» ամրոցի կառուցման զուգահեռ վերակառուցվել է և ասֆալտապատվել է դեպի ամրոց տանող ճանապարհը, կազմակերպվել է ավտոկայանատեղ, բարեկարգվել է բլրի վերին հատվածը՝ ստեղծվել է հանգստի գոտի և կառուցապատվել է 1-2 հարկանի շինություններով, որոնք օգտագործվում են որպես հասարակական սննդի օբյեկտներ: Նորաբաց «Սև բերդ» ամրոցում արդեն իսկ կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ:

Տարածքի արևմտյան հատվածում անցնում են բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային գծեր /110 կվ/: Բնակչության անվտանգության ապահովման օբյեկտների շահագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերով սահմանվում են գոտիներ, հողամասերի սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմ: Այդ գոտիներում հողամասերի վրա արգելվում է հատուկ իրավական ռեժիմին հակասող ցանկացած գործունեություն:

Նրանց անվտանգության և սպասարկման համար, ըստ գործող նորմերի, սահմանված է 20.0 մետր օտարման գոտի: Տարածքում էներգետիկայի օբյեկտների հողերի գոտին զբաղեցնում է 6.1 հեկտար:

Ռեկրեացիոն գոտին հիմնականում կանաչապատված է «Մայր Հայաստան» հուշարձանի և նրա մոտեցման ճանապարհի /ծառուղու/, ինչպես նաև լճին հարող տարածքները: Ծառուղու երկայնքով աճում են բարդի, եղևանի ծառերը: Տարածքում առկա են կաղնի կովկասյան, կեղծ ակացիա, գիհի, սոճու ծառեր և տարածաշրջանին կլիմայական պայմաններին բնորոշ թփեր: Գյումրու բաձրադիր տարածքը դասվում է տափաստանային գոտու /1400-2600մ/: Չկանաչապատված անօգտագործելի մյուս տարածքներում առկա է գոտուն բնորոշ սիզախոտային, փետրախոտային, հացազգի-տարախոտային բուսականությունը:

Խորհրդային ժամանակահատվածում կանաչապատված տարածքում գործում էր ոռոգման ցանցը, այսօր այն չի գործում և ենթակա է վերակառուցման կամ որոշ հատվածներում փոփոխման:

Տարածքում գոյություն ունեն գրունտային ճանապարհներ և արահետներ:

Տարվա կտրվածքով տարածքի կազմակերպման, կանաչապատման և նախատեսվող օբյեկտների շահագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել կլիմայական պայմանները:

Տարածքը գտնվում է շինարարակլիմայական «ցուրտ» գոտում (ՀՀՇՆ II-7.01.96) զով ամառով, ցուրտ ձմեռով:

Կլիման ցամաքային է, համեմատաբար տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով: Տարեկան միջին ջերմաստիճանը 7 °C է, հունվարինը՝ - 8 °C (նվազագույնը՝ - 35 °C), հուլիսինը՝ 20 °C (առավելագույնը՝ 34 °C): Տարեկան տեղումները 500 մմ են: Գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում:

«Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու վերականգնմումը և զարգացումը չի հակասում Հայաստանի Հանրապետության կառավարության 3 մարտի 2005 թվականի N 295-Ն որոշմամբ հաստատված Գյումրու քաղաքի գլխավոր հատակագծին:

Ծրագրի իրականացման գործընթացին ակնկալվում է Գյումրու քաղաքապետարանի, անհատ սեփականատերերի, ՀՀ մշակույթի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, բնակիչների, քաղաքացիական հասարակության ակտիվ խմբերի մասնակցությունը և աջակցությունը:

Տարածքի և դրանում առկա շինությունների և հուշարձանների կառավարումն իրականացվում է՝ ՀՀ մշակույթի նախարարության, Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց» ՀՈԱԿ-ի և շինությունների սեփականատերերի կողմից:

3. Վարչական տեղեկություններ

3.1 Պատասխանատու մարմիններ

ՀՀ մշակույթի նախարարություն, Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան ու նրան ենթակա «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց» ՀՈԱԿ և անհատ սեփականատեր:

3.2 Վայր, անվանում և հասցե

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Մայր Հայաստան-Սև բերդ» հարող տարածք:

3.3 Քարտեզին հղում

3.4 Հուշարձանի տեսակը

«Սև բերդը» ամրոցը՝ պատմաճարտարապետական, «Մայր Հայաստան» հուշարձանը իրեն պանվանդանով՝ մոնումենտալ արվեստի

3.5 Սեփականության իրավունք

Կանաչապատ այգու տարածքի հողամասը, ասֆալտապատ և գրունտային ճանապարհները, արհեստական լիճը, ավտոհանգրվանները գտնվում են Գյումրու քաղաքապետարանի հաշվեկշռում /համայնքի սեփականությունն է/, կառուցապատված տարածքի շինությունները հանդիսանում են մասնավոր սեփականություն:

«Մայր Հայաստան» հուշարձանը պետական սեփականություն է /ի դեմս ՀՀ պետական գույքի կառավարման վաչության/, այն ընդգրկված է օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակում:

«Սև բերդ» ամրոցը 2005 թվականից՝ մասնավոր սեփականություն:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային գծերը և դրա հետ կապված ենթակառուցվածքները պետական սեփականություն է /գտնվում են էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարաության հաշվեկշռում/:

3.6 Օրենքով սահմանված պաշտպանություն/ սահմանափակումներ

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները և դրանց պատմական միջավայրը պահպանվում են համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման» ու «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

2001 թվականին գործող Հողային օրենսգիրքը սահմանափակում է, կարգավորում է և սահմանում է հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման ընթացքը, հողերի բերրիությանը, հողօգտագործման արդյունավետության բարձրացումը, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանումը և բարելավումը, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարեևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման:

Գյումրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծ:

«Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցի գոտեվորման նախագծ:

Վիճակի եզրակացություն

«Մայր Հայաստան» հուշարձանը ու նրա պատվանդանը վերջին տարիներում ուժեղացվել և վերանորոգվել են:

«Սև բերդ» ամրոցում 2005-2016 թթ. իրականացվել են ամրացման, նորոգման, վերահատակագծման վերակառուցման /փոփոխում, հարմարեցում / աշխատանքներ:

Այդ հուշարձանների ֆիզիկական վիճակը գնահատվում է բավարար:

5. Առկա տեղեկություններ

5.1 Փաստագրական աղբյուրներ

Լուսանկարներ /ցամաքային/ – անձնական, լավ որակի

Տեսանյութ – համացանց (www.youtube.com), միջին որակի

5.2 Օգտագործված գրականություն

Հիմնական աղբյուրներն են՝

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման» ՀՀ օրենք:

Հայաստանի Հանրապետության կառավարության 3 մարտի 2005 թվականի N 295-Ն որոշմամբ հաստատված Գյումրու քաղաքի գլխավոր հատակագծի և «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցի գոտևորման նախագծերի բացատրագրեր:

5.3 Արդեն կատարված դաշտային աշխատանքներ

«Սև բերդի» ամրոցի տարածքում իրականացվել են պեղման աշխատանքներ:

«Սև բերդ» ամրոցում իրականացվել են ուժեղացման, նորոգման, վերակառուցման զուգահեռ իրականացվել են ծավալուն միջամտություններ:

Վերջին տարիներուն իրականացվել են «Մայր Հայաստան» հուշարձանի պատվանդանի վերականգնման աշխատանքները:

5.4 Ընթացիկ ծրագրեր

Գյումրու քաղաքի գլխավոր հատակագծով և «Կումայրի արգելոց թանգարանի գոտևորման» նախագծերում ամրագրված տարածքի զարգացումը:

5.6 Արդեն պլանավորված ծրագրեր

Չկան

5.7 Արդեն կատարված ֆինանսական հաշվարկներ

Չկան

6. ՆՏԳ-ի շրջանակը

6.1 Գնահատման չափը/բնույթը

Սուրեն Մաքսապետյան

Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ 1993թ.-մինչ օրս: Համակարգում և ղեկավարում է Երևան քաղաքի կանաչապատման ոլորտը: Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու 1985թ.:

Երևանի Պետական Գյուղատնտեսական ինստիտուտ 1968-1973 թթ.:

Կարո Այվազյան

2000 թ.-մինչ օրս Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Երևանի տարածքային բաժնի պետ

1999–2000 թ. Երևանի քաղաքի Ավան թաղապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ

1996 – 1999 թ. Երևանի քաղաքի Էրեբունու թաղապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ

1985 –1993 թ. «Վերանորոգնախագիծ» ինստիտուտ՝ նախագծի գլխավոր ճարտարապետ

1982- 1985 թ. «Հայնախագիծ» ինստիտուտ՝ ճարտարապետ

1993 – 1988 թ. «Մոդեռն» նախագծային կոոպերատիվի նախագահ

2002 թ. ԻԿՕՄՕՍ/Հայաստան հասարակական կազմակերպության անդամ

1995 թ. Արվեստագետների միջազգային ֆեդերացիայի անդամ /ՅՈՒՆԵՍԿՕ/

Առաջադրանքի կատարման համար ծախսվել է երեք օր ուսումնասիրությունների համար և 8 օր գրասեղանի մոտ:

6.2 Ուսումնասիրության սահմանափակումները

Չկան

7. ՆՏԳ

7.1 Նախապատմություն՝ ձևը, գործառույթը և զարգացումը

7.1.1 Վայրի համառոտ նկարագիրը՝ դրա քաղաքային համատեքստի վերաբերյալ նշումներով :

«Մայր Հայաստան-Սև բերդ» քաղաքային նշանակության ռեկրեացիոն գոտին գտվում է Գյումրի քաղաքի հարավ-արևմուտքի հատվածում Ղարսի պողոտայի հարող տարածքում և հանդիսանում է «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցի մի մասը:

Տարածքում կան երեք կանգուն բերդեր: Գյումրու **«Սև»** /Փոքր/, բերդը, այժմ վերածված մշակութային կենտրոնի, «Մայր Հայաստան» հուշարձանը, տարածքով անցնում են բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային գծեր, ասֆալտապատ և գրունտային ճանապարհներ, կառուցվել է արհեստական լիճ, ավտոհանգրվաններ, տարածքներ կառուցապատված 1-2 հարկանի հասարակական և բնակելի շինություններով:

7.1.2 Շենքի կամ վայրի՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը պատմական զարգացման և էվոլյուցիայի համառոտ ակնարկ:

Արխիվային նյութերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ ռուսական ժամանակաշրջանում 1828 թվականից տարածը քաղաքի զարգացման համար չի օգտագործվել: Տարածքով անցել է դեպի Ղարս քաղաք անցնող ճանապարհը /արխիվային քարտեզները կցվում են/:

«Սև» բերդը եղել է պաշտպանական կառույց և մինչև 20-րդ դարի սկզբի ծառայել է որպես զինվորական բանտ: Պետք է նշել, որ մինչև 50-ական թվականները Գյումրին /Լենինական/ համարվել է որպես սահմանային քաղաք, որը ազդել է նրա զարգացմանը:

1960-ական թվականների կեսերին տարածքը սկսվել էր կանաչապատվել: Միայն 1975 թվականից «Մայր Հայաստան» հուշահամալիրի կառուցումից հետո այն զարգացել է որպես քաղաքային նշանակության ռեկրեացիոն գոտի:

7.2 Նշանակություն

«Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտին չնայաց որոշ տարածքների կառուցապատմանը մինչ օրս պահպանում է իր դերը և նշանակությունը: Այստեղ ամեն տարի «Մայր Հայաստան» հուշարձանի մոտ տեղի են ունենում մայիսի 9-ին Երկրորդ աշխարհամարտում և Ղարաբաղի /Արցախի/ ինքնապաշտպանության պատերազմում տարած հաղթանակների հիշատակի միջոցառումները: Այն միավորում է մարդկանց, հիշատակվում են այն համամարդկային արժեքները, որոնք ապրեցնող են և վկայում են մեր ժողովրդի հերոսական և արարող ոգին:

Համայնքի համար կարևոր նշանակության ունեցող տոնի միջոցառումները կազմակերպում է Գյումրու քաղաքապետարանը:

Պետք է նշել նաև, որ դեռ խորհրդային ժանանակից մինչ օրս պահպանվել է հարսանիքների մեկնարկի հուշարձան այցելելու ավանդույթը:

«Մայր Հայաստան» հուշարձանը 1975 թվականից իր սկզբնական նշանակությամբ մինչ օրս փոփոխության չի ենթարկվել և օգտագործվում է իր սկզբնական տեսքով և շարունակում է նշանակալի լինել քաղաքացիների համար:

«Սև բերդ» ամրոցը իր սկզբնական նշանակությունը կորցրել է և ՀՀ մշակույթի նախարարության հետ համաձայնեցված փոփոխվել է գործառնական նշանակությունը այն վերածվել է մշակութային կենտրոնի: Բերդի, որի սկզբնական տեսքը զգալիորեն փոփոխվել է՝ կորցնելով իր ճարտարապետական առանձնահատկության մի մասը, կարող է շարունակել մեծ նշանակություն ունենալ քաղաքացիների համար որպես հիմնական բերդի համալիրի մի մաս և Գյումրի քաղաքի հիմնադրման խորհրդանիշ:

7.2.1 Նշանակության/պատմական և ժառանգության կարևորության վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Ռեկրեացիոն գոտում առկա հուշարձանները ունեն պատմական, ճարտարապետական, գեղագիտական, գիտական և մշակութային նշանակություն:

Մասնավորապես իր նշանակությամբ եզակի «Ալեքսանդրոպոլ» ամրոցի համալիրը և դրա մաս կազմող «Սև բերդը» ունի ոչ միայն պատմական, այլ նաև հետաքրքիր է 19-րդ դարի Ռուսաստանի կայսրության ռազմական /պաշտպանական/ կառույցների ինժեներական զարգացման գիտական ուսումնասիրման տեսանկյունից:

Երևան քաղաքի «Մայր Հայաստան» հուշարձանի կառուցման համար հայտարարված մրցույթում 2-րդ տեղը շահած աշխատանքը որոշվել էր իրականացնել Գյումրի քաղաքում: Այն մոնումենտալ արվեստի բացառիկ նմուշներից է և իր գեղարվեստական որակներով չի զիճում Երևան քաղաքի «Մայր Հայաստան» հուշարձանին: Քաղաքային իշխանությունների որոշմամբ ընտրվել էր մասնակի կանաճապատված ազատ ընթարցակ տարածք, որում հաշվի են առնվել արձանի բացարձակ չափերը, ընկալման բարենպաստ պայմանները և փոխկապվածությունը քաղաքի հետ:

7.2.2 Գնահատման մեջ հաշվի առնվող հնարավոր կատեգորիաների ստուգացանկ:

«Ալեքսանդրոպոլ» ամրոցի համալիրը կարևոր է՝ որպես Ռուսաստանի կայսրության կողմից ազատ տարածքում հիմքից կառուցված պաշտպանական կառույց, որը վկայում է այդ ժամանակաշրջանի ռուսաստանի ռազմական և ինժեներական զարգացման մակարդակը: Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքը այն գիտական ասպարեզում կարող է դառնալ ՀՀ և ՌԴ միջև համագործակցության օբյեկտ:

Այսպիսով պատմաճարտարապետական ամրոցը համարվում է բացառիկ /իր տեսակով եզակի/, հանրապետական նշանակության հուշարձան:

«Մայր Հայաստան» հուշահամալիրը ինքնատիպ է իր պատվանդանի ճարտարապետությամբ և բրոնզե արձանով և բարձր գեղարվեստական որակներով մոնումենտալ արվեստի բացառիկ նմուշներից է: Արձանի տեղադրման արդյունքում հիմք է դրվել տարածքի կազմակերպմանը և հանգստի գոտու ստեղծմանը: «Մայր Հայաստան» հուշաձանը նույն պես բացառիկ տեղական և տարածքային նշանակություն ունի:

7.3 Խոցելիության/ռիսկի գնահատում

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը հսկայական վնաս հասցրեց Գյումրի քաղաքին: Սակայն «Սև բերդ» ամրոցը և «Մայր Հայաստան» հուշարձանը մնացին կանգուն: Որոշ հատվածներում տեղի են ունեցել դեֆորմացիաներ և ճաքեր: Գտնվելով սեյսմիկ վայրում՝ հուշարձանները ներկայումս ևս ենթարկվում է ռիսկայնության, որի հետևանքով հետագա վերականգնողական աշխատանքներում անհրաժեշտ կլինի հուշարձան կառույցները համապատասխանեցնել սեյսմիկ անվտանգության չափորոշիչներին /կամ ավելացնել սեյսմազինվզծությանը/՝ առանց խաթարելու հուշարձաների պատմական տեսքը: 1988 այնուհետ 1990-կան թթ. սկզբում հանրապետությունում ծանր տնտեսական ճգնաժամի արդյունքում տեղի է ունեցել տարածքի նպատակային օգտագործման և նշանակության նվազում: Պատշաճ չի իրականացվել տարածքի հսկողություն որի արդյունքում քաղաքացիների կողմից իրականացվել էր անօրինական ծառահատումներ և անկառավարելի տարերային կառուցապատում, տեղի է ունեցել հողի էրոզիա, տարվա կտրվածքով չի իրականացվել հերթական ինժեներական /ոռոգման, լուսավորության/ ցանցերի, ինչպես նաև ճանապարհների, դեպի «Մայր Հայաստան» հուշարձան տանող ծառուղու և դեկորատիվ ջրային համակարգի նորոգման աշխատանքները:

«Սև բերդ» ամրոցի վերակառուցմամբ և նրանում մշակութային կենտրոնի ստեղծմամբ բարեկարգվել են հարակից տարածքները, կառուցվել է ասֆալտապատ ճանապարհ, ավտոկայանատեղի, սակայն այդ տարածքը առանձնացվել է հիմնական գոտուց և լիարժեք մատճելի չէ շարքային քաղաքացուն:

Տարածքի պահպանման և վերականգնման համար խոչընդոտ են հանդիսանում վարչական թույլ կառավարումը, զարգացման ծրագրի բացակայությունը, կառավարման ձևը, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը:

Տարածքի հետագա զարգացման և ընդլայնման առաջնահերթ խնդիրների լուծման համար անռրաժեշտ է կազմել իրատեսական ծրագիր, ընտրել կառավարման արդյունավեր ձևը և վերոնշյալ ծրագրի սկզբունքների, տարածքի ուսումնասիրման հիման վրա կազմել ռեկրեացիոն գոտու կազմզկերպման և հետագա ընդլայնման նախագծային առաջադրանքը:

7.4 Տեխնիկական վիճակ

Ակնադիտական ուսումնասիրության և քաղաքապետարանի տեղեկությունների հիման վրա կարելի է արձանագրել, որ պատմամշակութային հուշարձանների ֆիզիկական վիճակը բավարար է: Վերջին տարիներին իրականացվել են «Մայր Հայաստան» հուշարձանի պատվանդանի վերականգնման աշխատանքները: «Սև բերդ» ամրոցում ուժեղացման, նորոգման, վերակառուցման աշխատանքներին զուգահեռ իրականացվել են ծավալուն միջամտություններ:

Տարածքում առկա ճանապարհները գրունտային են և խարխլված, ոռոգման ցանցը վթարային վիճակում է, հետիոտն ճանապարհների ծածկույթը և աստիճանները, ինչպես նաև «Մայր Հայաստան» հուշարձանի առանցով բազլտ քարից իրականացված աստիճանները, ջրավազանները, լուսավորության սարքերը մասնակի խարխլված են:

Ղարսի փողոցի հարող տարածքում գտնվող արհեստական լիճը բավարար վիճակում է:

Տեղ տեղ բուսականությունն ի սպառ բացակայում է, որի հետևանքով գոյանում են փոշու արտանետումներ՝ հատկապես ամառվա շոգ եղանակին:

7.5 Անհրաժեշտ վերանորոգման համառոտ նկարագիր

Հաշվի առնելով, որ պատմամշակութային հուշարձանների ֆիզիկական վիճակը գնահատվել է որպես բավարար, առաջարկվում է տարեկան կտրվածքով իրականացնել ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Վերանորոգման կարիք ունի տարածքում առկա գրունտային ճանապարհները և ոռոգման ցանցը, հետիոտն երթուղիները ծածկույթը և աստիճանները, ինչպես նաև «Մայր Հայաստան» հուշարձանի առանցով բազլտ քարից իրականացված աստիճանները, ջրային ավազանները, լուսավորության սարքերը:

Իրականացնել ազատ տարածքներում կանաչապատման աշխատանքներ:

33.0 հեկտար մակերեսով գոտու կայունության նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել ոռոգման ցանցի նորոգումը և ընդլայնումը: Այդ ցանցի առկայության դեպքում հնարավոր կլինի պահպանել գոյություն ունեցող կանաչապատ տարածքները և կնպաստի նրա ընդլայնումը ու բարեկարգմանը:

Ավարտելով այդ փուլը հնարավորություն կստեղծվի կատարել «Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու ընդլայնումը մինչև 46.0 հեկտար այն տարածելով դեպի հյուսիսային հատվածամաս: Այդ դեպքում ռեկրեացիոն գոտու մակերեսը կկազմի մոտ 79.0 հեկտար կանաչապատված տարածք, որի օգտագործումը ավելի արդյունավետ է:

7.6 Վերականգնման քաղաքականություն և առաջարկներ

7.6.1 Վայրի տեսլականի և դրա կայունության վերաբերյալ ամփոփումը նախնական փուլում:
7.6.2 Վերականգնման փիլիսոփայություն:
7.6.3 Միջամտության մակարդակ:
7.6.4 Պատշաճ օգտագործման նախնական առաջարկներ, եթե կիրառելի է:
7.6.5 Սոցիալական կիրառումների և կայուն զարգացման հնարավորություններ:
7.6.6 Ամրացման/ծածկապատման, վերանորոգման, կոնսերվացման, վերականգնման գերակայությունների ընդհանուր գնահատում:
7.6.7 Հանրամատչելիություն:
7.6.8 Այլ առավելություններ:

Դիտարկելով խորհրդային ժամանակահատվածում ռեկրեացիոն գոտու քաղաքացիների կողմից ակտիվ օգտագործումը և հաշվի առնելով հիշողությունները կարելի է ենթադրել, որ այն նախկին տեսքի բերելու և գրավիչ դարձնելու աշխատանքների **սկսելու պես** կվերականգնի քաղաքի տարածական համակարգում իր նախկին նշանակությունը և տարածքի ճիշտ կառավարման դեպքում կապացուցի իր կենսունակությունը:

Բնական լանդշաֆտի արհեստական կանաչապատման և բարեկարգման աշխատանքների նպատակը պահպանել արժեքավոր կենսապատկերի, որտեղ շահեկանորեն ընդգծվում են տարածքի պատմական նկարագիրն ամբողջացնող բնության մեջ գտնվող «Մայր Հայաստան» և «Սև բերդ» հուշարձանները:

Ռեկրեացիոն գոտու վերականգնման և զարգացման միջոցառումներն պետք է ուղղված լինեն պատմական արժեք ներկայացնող ռելիեֆի պահպանմանը, կենսապատկերի պատմական տեսքի և շրջապատի բնության հետ ունեցած կապերի վերականգնմանը, լանդշաֆտն աղճատող շենքերի, շինությունների, տնկարանների վերացմանը, բուսականության վերականգնմանը, պահպանմանը և բնապաշտպան անհրաժեշտ միջոցառումների կիրառմանը:

Գոտու տարածքում կարելի է ծավալել տնտեսական աշխատանք, եթե այն չի վնասում կամ աղճատում լանդշաֆտը, չի պահանջվում կառուցել նոր մեծածավալ կապիտալ շինություններ:

Գոտում թույլատրվում է իրականացնել տնտեսական գործունեություն, որը կապված է այդ տարածքների նպատակային օգտագործման հետ, եթե այն չի վնասում կամ աղճատում ընդհանուր տարածքի հորինվածքը և լանդշաֆտը, չի խոչընդոտում հուշարձանների կամ պատմական միջավայրի ընկալմանը:

Վերոհիշյալ պահանջների կատարման արդունքում կարող ենք ստանալ հետիոտն շարժման ինտենսիվ անցումով լիարժեք ավարտված կանաչապատ միջավայր: Այդ ամենը զգալի կփոխեն քաղաքի բարոյահոգեբանական իրավիճակը, կնպաստի քաղաքի պատմական «Կումայրի» արգելոցի միջավայրի պահպանմանը և զբոսաշրջության զարգացմանը:

Տարածքի հանդեպ հետաքրքրությունը առավել ակտիվացավ վերջին տարիներին «Սև բերդ» ամրոցում մշակութային կենտրոնի ստեղծման և նրանում մշակութային միջոցառումների ուղակի ազդեցության հետևանքով:

Ծրագրերի մշակման ընթացքում նաև անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված քաղաքաշինական զարգացումները՝ Ղարսի փողոցից դեպի նորակառույց թաղամասեր գոտիով նախատեսվող ճանապարհը, գոտու կապը այդ թաղամասերի հետ, ինչպես նաև ռուսական ռազմական բազայի պաշտպանության և տարածքով անցնող բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտու սահմանափակումները:

Վերոնշյալ օգտագործման սկզբունքներին /պայմաններին/ համապատասխան և հաշվի առնելով Հայաստաի Հանրապետության, Գյումրի քաղաքի տնտեսական և ֆինանսական կարողությունները, ինչպես նաև տարածքի զարգացման հնարավորությունները և առանձնահատկությունները անհրաժեշտ է ընտրել լավագույն կառավարման ձևը, որը կերաշխավորի գոտու օգտագործման կենսունակությունը, կայուն զարգացումը և երկարաժամկետ ծրագրերի իրականացումը: Տարածքի կառավարումը պահանջում է մոտեցումներ, որոնք պետք է բխեն և հաշվի առնեն հանրության, օգտագործողների և շահագրգիր կազմակերպությունների շահերը:

Տվյալ նախագծի շրջանակներում ակնկալում ենք գոտու և հուշարձանների նորովի ներկայացում և հանրայնացում: Գոտու զարգացման հայեցակարգի մշակման և կառավարման ձևի ընտրության համար առաջարկում ենք կատարվել հետևյալ հետազոտման աշխատանքները՝

- Հետազոտել տեղանքի կազմակերպման նախկին փորձը:
- Հարցումներ անցկացնել Հայաստանում գործող առավել ակտիվ տուրիստական կազմակերպությունների, արշավական ակումբների հետ հասկանալու համար ինչպես են վերջիններս ներգրավվում զբոսաշրջիկներին դեպի հուշարձաններ:
- Կազմակերպել հանրային քննարկումներ, հարցումներ անցկացնել Գյումրիու առավել ակտիվ խմբերի և շահագռգիր կազմակերպությունների /այդ թվում ՌԴ ռազմազբազայի/ հետ հասկանալու համար թե ինչպես են պատկերացնում և ներգրավվում հանգստի գոտու կազմակերպմանը և զարգացմանը:

Վերլուծելով վերոնշյալ կատարած հետազոտման և հարցումների արդյունքների հիման վրա հնարավոր կլինի հստակեցնել թույլ կողմերը, խնդիրները, առավել իրատեսորեն ձևավորել կառավարման պլանի կազմումը, ակնկալվող կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքերը, ազդեցության գնահատումը (համայնքային, տնտեսական, մշակութային և այլն), բացահայտել համատեղ օգտագործման և սպասարկման ձևերը, ձևավորել տարածքի վերակառուցման, զարգացման և ընդլայնման նախագծային առաջադրանքը և այլն:

Ենթադրում է ակտիվ աշխատանք զբոսաշրջային կազմակերպությունների հետ, որպեսզի առանձնացվի զբոսաշրջության զարգացման հնարավոր ուղղությունները և հետագայում համապատասխան տուռ ծրագրերի մշակում:

Հաշվի առնելով, որ հանրապետության տնտեսական վիճակը, իրավական դաշտը, փորձը կառավարման ոլորտում՝ տարածքի նկատմամբ կորպորատիվ կառավարման ձևի ըմտրությունը գտնում ենք ոչ նպատակահարմար:

Ուստի տարածքի կայուն զարգացման համար նպատակահարմար է օգտագործել ձևավորված կառավարման համակարգը՝ տարածքի կառավարումն իրականացնել Գյումրու քաղաքապետարանի կողմից՝ ի դեմս «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց» ՀՈԱԿ ղեկավարմամբ և վերահսկմամբ, ընդգրկելով ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ապահովելով բնակչության, տարբեր պետական և հասարակական, ինչպես նաև բիզնեսի ոլորտի կազմակերպությունների համագործակցությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց» ՀՈԱԿ-ը Գյումրու քաղաքապետարանի ենթակայության տակ է, առաջարկում ենք լրամշակվել կազմակերպության կանոնադրությունը, մշակել գործունեության նկատմամբ կառավարման գործառույթները սահմանող կարգը և կանոնակարգերը, որի նպատակն է բարձրացնել /ընդլայնել/ ՀՈԱԿ-ի պարտականությունները և իրավասությունները /լիազորությունները/:

Ուսումնասիրելով «Հայնախագիծ» ՓԲԸ կողմից մշակած Գյումրի քաղաքի պատմական կենտրոնի գոտիավորման նախագծի հանգստի համար նախատեսված գոտու թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակը՝ «Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու և 2-րդ փուլի ընդլայնման տարածքների համար տեղադրելով տաղավարներ, կրպակներ, շվաքարաններ հնարավոր է առանձնացնել հետևյալ օգտագործման ձևերը՝

- Բացօթյա ցուցահանդեսներ:
- Բացօթյա թատրոններ և կինոցուցադրություն:
- Կեգլախաղարաններ, սեղանի թենիս, մարզահրապարակներ, պուրակներ գոլֆի, անիվավոր չմուշկների և այլնի համար:
- Մանրածախ առևտուր, բացօթյա սրճարաններ (սահմանափակ):
- Ճարտարապետական փոքր ձևեր:
- Ավտոկանգառներ:

Միաժամանակ տարածքում անհրաժեշտ է կառուցել /հիմնական կառույց/ առաջին օգնության բուժ կետ և պահակակետ, իսկ տարածքի սպասարկման (տեխնիկական աշխատողների) համար ժամանակավոր տիպի կառույցներ:

Հարկենք համարում նշել, որ քաղաքում գործում և հաջողությամբ զարգանում է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որի առաքելությունն է Գյումրին վերածել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային և միջազգային կենտրոնի: Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները միտված են տեխնիկական և գործարար հմտությունների զարգացմանը, տեխնոլոգիական ձեռներեցության խթանմանը, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում նորարար գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացմանը, նոր տեխնոլոգիական ընկերությունների ձևավորմանը, արտասահմանյան ներդրումների ներգրավմանը:

Նախատեսվում է նաև /մոտ ժամանակ/ կառուցել «Թումո» կենտրոնը: Ուստի անհրաժեշտ է բանակցել այդ կենտրոնների հետ իրենց արտադրանքները տարածքում փորձարկելու և ցուցադրելու հնարավորության համար: Ակնկալում ենք, որ թռչող սարքերի համար անհրաժեշտ է ստեղծել տարածք պարտերային կանաչապատման ձևով, իսկ արհեստական լիճը օգտագործել ջրային սարքերի փորձարկման համար: Միաժամանակ լուսավորության /գեղարվեստական/ տեխնոլոգիաների ցուցադրման համար օգտագործել «Սև բերդ» և «Մայր Հայաստան» հուշարձանները:

Հաշվի առնելով տարածքի հնարավորությունները՝ Գյումրու քաղաքապետարանին առաջարկում ենք կազմակերպել.

- Ստեղծագործական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար /2 կամ 3 տարի մեկ/ կազմակերպել քանդակագործների թեմատիկ միջոցառումներ /քանդակագործների մրցույթ/: Բոլոր ստեղծված քանդակները կարող են տեղադրվել տարածքում, որոնք կձևավորեն այգու գեղարվեստական միջավայրը:

- Առաջատար հասարակական սննդի օբյեկտների ղեկավարների հետ և այլ կազմակերպությունների հետ բանակցել տարածքում մարզի ուտեստների փառատոն կազմակերպելու համար, որտեղ կազմակերպությունները հնարավորություն կունենան ցուցադրելու և գովազդելու իրենց արտադրանքը:
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների և միջնականգ դպրոցների մասնակցությամբ կազմակերպել սպորտային մրցումներ՝ թեթև ատլետիկա և այլն:
- Տարածքում ստեղծել պեղումների ուսուցման վայր /պեղումների դասընթաց/ որտեղ դպրոցականները փորց կբերեն պեղման աշխատանքներին:
- Շարունակել ավանդույթ դարձած շաբաթօրյակների շրջանակում ոռոգման ցանցի հասանելի տարածքներում ծառատունկի իրականացումը:
- Օգտվելով այն փաստից, որ Գյումրու քաղաքի որպես հիմնադիր հանդիսանում է «Ալեսանդրոպոլ» բերդը և հաշվի առնելով մշակութային կենտրոնի ստեղծումը՝ առաջարկում ենք «Քաղաքի օր» միջոցառման մեկնարկումը և ավարտը իրականացնել Սև բերդի տարածքում, ներգրավելով կանաչապատ տարածքները:
- Հաշվի առնելով գյումրեցիների մեծ սերը դեպի թատրոն, առաջարկում ենք ստեղծել բացօթյա թատրոն, որը կարող է ծառայել համերգների կազմակերպման և կինոցուցադրության համար:
- Բանակցել Ռուսաստանի Դաշնության ռազմաբազայի հրամանատարության հետ տարածքում համատեղ ծրագրերի մշակման և հնարավոր միջոցառումների մասնակցության ուղղությամբ, օրինակ՝ «Քաղաքի օր», ուտեստների փառատոն, հաղթանակի օր, սպորտային մրցումներ Գյուրու ակումբների հետ, համերգներ, շաբաթօրյակ, ռազմաբազայի բաց դռների օր /հնարավորության դեպքում ռազմական տեխնիկայի և «Ալեսանդրոպոլ» բերդի ցուցադրություն/ և այլն:

Վերոնշյալ և նմանատիպ կազմակերպչական միջոցառումների մասին անհրաժեշտ է իրազեկել բնակչությանը և կազմակերպություններին, որը կնպաստի իրենց ակտիվ մասնակցությունը և հետաքրքրությունը, ինչպես նաև վերջիններս կկարողանան գնահատել ներդրումային ռիսկերը, ակնկալիքները և ճիշտ կազմել երկարաժամկետ ծրագրերը:

Ծրագրերի իրականացման հաջողության և երկրորդ փուլի տարածքների օգտագործման սպառման դեպքում հնարավոր է ռեկրեացիոն գոտու փուլային ընդլայնումը դեպի հյուսիսային մասում գտնվող կանաչապատման և հանգստի նպատակով նախատեսվող տարածքները:

7.7 Ֆինանսներ

Գոտու տարածքի արժեքը վերակենդանացնելու նպատակով անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք ուղղված կլինեն հետևյալ միջոցառումներն իրականացնելու համար.

1. Տարածքի և հուշարձանների նախնական ուսումնասիրություն

ա. Մանր ճարտարապետական ձևերի /աստիճանների, հենապատերի, ջրավազանների և այլն/, ճանապարհների, ինժեներական ցանցերի տեխնիկական վիճակի թերությունների ակտ:

բ. Առկա բուսական վիճակի մասին եզրակացություն և հաշվառում /գույքագրում/:

գ. Տարածքում գոյություն ունեցող շինությունների գույքագրում:

*Նշված աշխատանքները առաջարկում ենք իրականացնել Գյուրու քաղաքապետարանի համակարգի կազմակերպությունների և ստորաբաժանումների համապատասխան մասնագետների կողմից՝ հանձնաժողովների միջոցով:

դ. Հուշարձանների նախնական տեխնիկական վիճակի մասին եզրակացություն- 500.000 դրամ:

ե. Տարածքի հանույթի ձեռքբերում – առաջին փուլի տարածք՝ 33.0 հա – 3.300.000 դրամ, երկրորդ փուլի տարածք՝ 45.0 հա – 4.500.000 դրամ: Ընդամենը – 7.800.000 դրամ:

2. Գոտու կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրի մշակում, նախագծային առաջադրանքի ձևավորում:

ա. «Մայր Հայաստան-Սև բերդ» ռեկրեացիոն գոտու վերականգնման և կազմակերպման նախագծային առաջարկների մրցույթի կազմակերպում (հանրային քննարկումներ) – 100.000 դրամ:

*Նշված գումարը նախատեսվում է մրցանակների տրամադրման համար:

բ. Էսքիզային նախագծի մշակում

(ցուցադրական պաստառներ, ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի և հանրային քննարկումներ) – 3.000.000 դրամ

գ. Տարածքի առաջին փուլի աշխատանքային նախագծերի մշակում (ճարտարապետական, կոնստրուկտորական, ինժեներական, դենդրոլոգիա, նախահաշվային փաստաթղթերի կազմում) – 10. 000.000 դրամ:

դ. Փաստաթղթերի թողարկում համալիր փորձաքննություն և համաձայնեցում - 2. 000.000 դրամ

Առաջարկում ենք աշխատանքային նախագծերը մշակել փուլային՝ առաջին հերթին մշակել ոռոգման ցաների, ճանապարհների, արահետների, լուսավորության, մանր ճարտարապետական ձևերի վերականգնման աշխատանքները, որը չի պահանջում համալիր փորձաքննություն:

7.7.1 Բյուջետային կարիքների ընդհանուր գնահատում և փուլայնություն:

7.7.2 Ներդրումների ներգրավման (իրական) հնարավորությունների գնահատում:

7.7.3 Ներդրումների վերականգնման (իրական) հնարավորությունների գնահատում:

Տարածքի պահպանությունը երաշխավորելու համար առաջին փուլում անհրաժեշտ է իրականացնել ոռոգման ցանցերի հիմնանորոգման և ընդլայնման աշխատանքները: Այդ ցանցի իրականացումը կապահովի գոյություն ունեցող կանաչապատ տարածքի պահպանումը և դրա հետագա ընդլայնմանը:

Ոռոգման ցանցերի երկարությունը կազմում է մոտ 3.0 կմ երկարություն:

Հաշվի առնելով Գյումրու քաղաքապետարանի միջոցների սուղ պայմանները առաջարկվում է առաջին հերթին իրականացնել ոռոգման ցանցերի հիմնանորոգումը, որից հետո այն ընդլայնել ըստ նախատեսվող ամենամյա ծառատունկի համար:

Ընդհանուր 3.0 կմ երկարությամբ ոռոգման ցանցի իրականացման արժեքը կկազմի մոտ 6.500.00 դրամ:

Առաջին օգնության բուժ կետի շինության կառուցման /20.0 ք.մ մակերեսով/ նախնական արժեքը կկազմի մոտ 6.000.00 դրամ:

Առաջնահերթ միջոցառումների երկրորդ փուլի աշխատանքների համար առաջարկում ենք գոյություն ունեցող ճանապարհների և արահետների վերականգնումը և գլխավոր հատակագծով նախատեսված հիմնական ճանապարհների կառուցումը լուսավորության սարքերով կահավորված:

Մոտ 700.0 մ երկարությամբ և 6.0 մ լայնությամբ գոյություն ունեցող գրունտային ճանապարհների վերակառուցման /ասֆալտապատման/ աշխատանքների համար արժեքը կկազմի 30.0 մլն դրամ:

Նշված աշխատանքները կբարձրացնի տարածքի գրավչությունը և հնարավորություն կստեղծի մշակած ծրագրով ապահովել տարածքի զարգացումը անհատ ձեռներեցիների և կազմակերպությունների բիզնես ծրագրերի իրականացման ու ներդրումների կատարման համար:

Առաջարկում ենք Գյումրու քաղաքապետարանին կազմակերպել բիզնես ծրագրերի իրականացման համար /հողի վարձակալության տրամադրումը/ թափանցիկ մրցութային եղանակով:

Անհրաժեշտ է նշել որ ձեռներեցների օբյեկտների տեղադրումը անհրաժեշտ է իրականացնել գլխավոր հատակագծով, իսկ աշխատանքային նախագիծը /համաձայն էսքիզային նախագծի/ և տեղադրումը՝ պատվիրատուի միջոցներով:

7.7.4 Արդյոք փորձե՞լ եք միջոցներ հայթայթել տվյալ վայրի կամ հուշարձանի համար:

Ոչ

7.7.5 Արդյոք ստացե՞լ եք միջոցներ տվյալ վայրի կամ հուշարձանի համար:

Ոչ

7.8. Կառավարում

Ինչպես նշվել է 7.6 բաժնում տարածքի կառավարումը նպատակահարմար է իրականացնել Գյումրու քաղաքապետարանի կողմից՝ ի դեմս «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց» ՀՈԱԿ ղեկավարմամբ և վերահսկմամբ, ներգրավելով ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ապահովելով բնակչության, տարբեր պետական և հասարակական, ինչպես նաև բիզնեսի ոլորտի

կազմակերպությունների համագործակցությանը, ստեղծել բարենպաստ և գրավիչ պայմաններ ներդրումներ իրականացնելու համար:

Կառավարումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա

- Մասնակիցների իրավունքների պահպանում,
- Մասնակիցների (մեծ, փոքր) իրավունքների հավասարազորություն,
- Շահագրգիռ անձանց դերը և մասնակցությունը կառավարման գործում,
- Գործունեության թափանցիկություն և տեղեկատվության բացահայտում,
- Մենեջմենթի (գործադիր մարմնի) պարտականությունները:

Կառավարումը պետք է համապատասխան խթան ապահովի մենեջմենթի համար՝ հասնելու այն նպատակներին, որոնցում շահագրգռված են կազմակերպությունները և քաղաքացիները: Այն պետք է նպաստի նաև գործուն վերահսկողության իրականացմանը՝ խթանելով միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Տարածքում բոլոր գործընթացները փոխկապված են և ձևավորում են համակարգ, որևէ գործընթացի փոփոխություն անմիջապես անդրադառնում է համակարգի ելքային արդյունքի (ծառայության որակի) վրա:

Այդ իսկ պատճառով՝

- Ցանկացած գործունեություն անհրաժեշտ է դիտել որպես գործընթաց, որոնք ունեն մատակարարներ և սպառողներ:
- Յուրաքանչյուր գործընթացի մասով սահմանել՝ որակյալ աշխատանքային փաստաթղթերով, ընթացակարգերով և հրահանգներով ապահովելու, ղեկավարության պատասխանավությունը:
- Անհրաժեշտ է կատարելագործել գործընթացները՝ ելնելով փաստացի գրանցված և վերլուծված շեղումներից:
- Ստորաբաժանումների, ինչպես նաև ներգրավված կազմակերպությունների աշխատանքների արդյունքները պետք է գնահատել՝ հաշվի առնելով դրա ազդեցությունը համակարգի գործառնության վերջնական արդյուքի վրա:
- Կատարելագործել խրախուսման համակարգ, որպեսզի ամբողջ անձնակազմն գործի որպես մեկ թիմ և իր ամբողջ ջանքերն ուղղի քաղաքապետարանի առջև դրված նպատակների իրականացմանը:
- Ստեղծել պայմաններ ու կիրառել առկա և պոտենցիալ խնդիրների խմբային լուծման ձևը, որը կապահովի համակարգային վերլուծությունը, կբարձրացնի ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների արդյունավետությունը:

8. Փաստաթղթավորում

Արխիվային նյութեր



Նկ.3. Պաշտպանական ամրոցի հատակագիծը 1828թ.

Նկ.4. 1845թ.-ի Ալեքսանդրապոլ քաղաքի գլխավոր հատակագիծ



Նկ.5. 1949թ.-ի Լենինական քաղաքի գլխավոր հատակագիծ



Նկ.6. 2000-ականների սկզբի Գյումրի քաղաքի հանույթ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
28 մարտի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2005 թվականի N 295-Ն

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 17-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

ա) Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ հաշվի առնելով շահագրգիռ մարմինների առաջարկությունները և դիտողությունները եռամսյա ժամկետում Գյումրու քաղաքապետի հետ համատեղ ապահովել Գյումրի քաղաքի կենտրոնի գոտիավորման նախագծի լրամշակումը և սահմանված կարգով հաստատումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



Նկ.7. Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծ



Նկ.8.Կումայրի արգելոց թանգարանի գոտևորման նախագիծ



Նկ.9. «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցի գոտևորման նախագիծ



Նկ.10. Հենակետային հատակագիծ



Նկ.11. Հողօգտագործման հատակագիծ



Նկ.12. Ընդլայնման հատակագիծ



Նկ.13.Գոտիավորման հատակագիծ

Նկ.14. 2000թ. Սև բերդի և Մայր Հայաստանի պատկերը

Նկ.15. 2000 թ. Սև բերդի տեսքը

Նկ.16. Մայր Հայաստան

Նկ.17. Մայր Հայաստանի հուշահամալիր

Նկ.18. Սև բերդի տեսքը հարավ-արևմուտքից

Նկ.19. Բարեկարգման հատվածներ

Նկ.20. Մայր Հայաստան հուշարձանի տեսքը հյուսիսից

9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ

Անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական խումբ կազմված հետևյալ մասնագետներից՝ կառավարման և տուրիզմի կազմակերպման մասնագետ, միջազգային և տեղական խորհրդատուներ, վերականգնող ճարտարապետ, կոնստրուկտոր, երկրաբան, ներքին և արտաքին էլեկտրասնուցման, ջրամատակարարման և կոյուղու, գազաֆիկացման մասնագետներ, շրջակա միջավայրի վրա ներգործության գնահատողներ /բնապահպաններ/, դենդրոլոգ, անվտանգության մասնագետներ, շինարարության տնտեսագետներ, վերականգնող շինարարներ, գեղարվեստական լուսավորության դիզայներներ, գովազդի /փիար/ մասնագետներ:

ՆՏԳ-ն իրականացրել է՝ Կարո Այվազյանը